ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՎԱՐԴԳԵՍ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

(ծննդյան 80-ամյակի առթիվ)

Լրացավ ականավոր պատմաբան, հայագետ, «Պատմա-բանասիրական հանդեսի» գլխավոր խմբագիր, ակադեմիկոս Վարդգես Միքայելյանի ծննդյան 80-ամյակը:

Վ. Միքայելյանը ծնվել է 1924 թ. դեկտեմբերի 5-ին, Աշոցքի Ղազանչի գյուղում: Տեղի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո նա զորակոչվում է, ապա մասնակցում Հայրենական պատերազմին՝ բանակի շարքերում ծառայելով 1942-1947 թթ., արժանանալով մարտական շքանշանների և մեդալների: Բանակից զորացրվելուց հետո Վ. Միքայելյանն ընդունվում է Երևանի պետական համալսարան և գերազանցությամբ ավարտում միջազգային հարաբերությունների ֆակուլտետը: Այնուհետև՝ 1955 թ., Վ. Միքայելյանն ավարտում է ասպիրանտուրան, պաշտպանում թեկնածուական ատենախոսություն՝ «Գյուղացիության դրությունը և գյուղացիական ելույթները Հայաստանում՝ 1918-1920 թթ.» թեմայով: Կյանքի ճանաչողության իմաստով արգասաբեր եղավ նրա աշխատանքի շրջանը 1955-1959 թթ.՝ «Սովետական Հայաստան» ամսագրի խմբագրությունում, որտեղ և ձևավորվեցին նրա լրագրողական-հրապարակախոսական ըմբռնումներն ու մոտեցումները:

Վ. Միքայելյանի՝ որպես խոշոր պատմաբանի լինելության համար էական նշանակություն ունեցան ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտին աշխատակցելը, աշխատանքային ու գիտական շփումներն ու առնչությունները ժամանակի հայ պատմագիտության առաջատար ներկայացուցիչների հետ: 1960-ական թթ. սկզբից, ընթացք տալով իր գիտական բազմակողմանի հետաքրքրասիրություններին, նա ավելի էր խորացնում իր մասնագիտական կարողությունները: 1960-1972 թթ. նա այստեղ աշխատում էր իբրև ավագ գիտաշխատող: 1972-1987 թթ. Վ. Միքայելյանը իր գիտական աշխատանքները զուգորդել է ակադեմիական-խմբագրական աշխատանքներին. իբրև ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագրի գլխավոր խմբագիր՝ նա անմիջական ազդեցություն է թողել ժամանակի հայագիտության զարգացման գործընթացների վրա: 1988 թ. սկսած՝ Վ. Միքայելյանը գլխավորում է Պատմության ինստիտուտի Հայ գաղթօջախների պատմության բաժինը, իսկ 1999 թ. ցայժմ դրան է համատեղում ակադեմիական հանրահայտ ու հեղինակավոր հայագիտական հրատարակության՝ «Պատմա-բանասիրական հանդեսի» գլխավոր խմբագրի պարտականությունը:

Ակադեմիկոս Վ. Միքայելյանի գործունեությունն ընդգրկուն է և բազմակողմանի: Որտեղ էլ աշխատի նա, մարմնավորի իր գիտական հղացումները, ի

հայտ է բերում հիմնահարցերը խորը և ըստ ամենայնի ուսումնասիրելու լայն կարողություններ: Այդպիսին է Ղրիմի հայկական գաղթօջախին նվիրված նրա պատմագիտական ուսումնասիրությունների ու հրապարակումների շարքը: Վ. Միքայելյանը այդ շարքի իր առաջին լուրջ ուսումնասիրությունը՝ «Ղրիմի հայկական գաղթօջախի պատմությունը» մենագրությունը (հրատ. 1964 թ.), ներկայացրեց իբրև դոկտորական ատենախոսություն՝ պաշտպանելով այն 1965 թ.: Բազմաթիվ հիմնահարցերով հատկանշվող այս թեման Վ. Միքայելյանն ամբողջացրեց «Ղրիմի հայկական գաղութի պատմություն (1800-1917 թթ.) » (1970 թ.), «Ղրիմի հայկական գաղթօջախի պատմությունը» (ռուս., 1974 թ.) և հանրագումարային նշանակություն ունեցող «Ղրիմահայոց պատմությունը» (1989 թ.) աշխատությամբ: Նշված ուսումնասիրության մեջ նա ամփոփել է Ղրիմի հայ գաղթօջախի վեցդարյա պատմությունը՝ նրա սկզբնական շրջանից մինչև 1910-ական թթ. վերջերը: Թեմային և սկզբնաղբյուրներին խորապես տիրապետելը Վ. Միքայելյանին հնարավորություն է տվել այն լուսաբանելու նաև պատմական այլ՝ համընթաց իրողությունների, կապերի ու հարաբերությունների կտրվածքով: Նշված շարքին է վերաբերում նաև «Ծովակալ Լ. Մ. Սերեբրյակով (Լազար Մարկոսի Արծաթագործյան)» աշխատությունը (1979 թ.), որտեղ բացահայտվում և արժեքավորվում են հայազգի նշանավոր ծովակալի խոշոր ներդրումն ու դերը ռուսական ռազմական նավատորմի պատմության ու տարեգրության մեջ:

Վ. Միքայելյանի աշխատությունները բնութագրվում են պատմական իրողությունների անաչառ ու ճշմարտացի վերարտադրությամբ: Դեռևս 1978 թ. իր խմբագրած «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագրում Վ. Միքայելյանը տպագրեց աղրբեջանական մարտնչող հակահայկականության պարագլխի կեղծարարությունները մերկացնող հոդված՝ «Զիյա Բունիաթովի հերթական «մտորումների» մասին» (ռուս.): 1980-ականի վերջերին և 1990-ական թթ. մեկը մյուսի հետևից լույս տեսան Վ. Միքայելյանի բազմաթիվ ուսումնասիրությունները, հոդվածներն ու հրապարակումները արցախյան հիմնահարցի առթիվ, ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում՝ հայերեն և օտար լեզուներով լույս տեսնող հրատարակություններում: Նրա խմբագրությամբ և հմտալի առաջաբանով լույս տեսավ «Լեռնային Ղարաբաղը 1918-1923 թթ.»վերնագրով փաստաթղթերի ու վավերագրերի ժողովածուն (ռուս., 1992 թ.), որտեղ գիտական համոզչությամբ և աննախընթաց լայն հենքով ներկայացված են նշված ժամանակաշրջանի՝ Արցախի պատմությանը և դրան աղերսվող կարևոր հիմնահարցերը լուսաբանող սկզբնաղբյուրները: Իր առաջաբանում Վ. Միքայելյանը հանգամանորեն ներկայացրել է այդ շրջանի՝ Արցախի պատմության դրամատիկական ընթացքը պայմանավորող պատմական ու քաղաքական գործոնների ամբողջությունը և դրանց շարունակական ընթացքը Արցախյան գոյամարտի արդիական փուլում: 1980-ականի վերջերից Վ. Միքայելյանը պարբերական մամուլում հաճախակի հանդես է եկել ոչ միայն Արցախի, նրա բնակչության պատմական ու արդիական իրավունքների հիմնավորումներով, այլև ազգային-քաղաքական մտքի ու կուսակցությունների վերագնահատման համոզիչ և հայրենասիրական հարցադրումներով: Ժամանակի համար հրատապ ու անձամբ իրեն հուզող բազմաթիվ հարցերին նա ելք տվեց նաև հրապարակախոսական անդաստանում: Իր խմբագրությամբ 1990-1992 թթ. լույս

տեսավ «Գոյամարտ» թերթը, որը լուրջ խոսք էր այն օրերի՝ Հայաստանի ու Արցախի առանցքային խնդիրներով ու դրանց լուսաբանությամբ զբաղված հայ մամուլի տարեգրության մեջ:

Վ. Միքայելյանի գիտական հետազոտությունների մյուս ուղղությունը հայերի ցեղասպանության հիմնահարցերն են, դրանց սկզբնաղբյուրների հայտնաբերումն ու հրապարակումը: Տևական մի ժամանակահատվածում նա աշխատել է Գերմանիայի արտգործնախարարության քաղաքական արխիվում և իրեն հատուկ բարեխղճությամբ վերհանել պաշտոնական ու ոչ պաշտոնական փաստաթղթերի մի պատկառելի խմբաքանակ, որը ցեղասպանության հետազոտողների համար ունի կարևոր նշանակություն: Դրանց մի մասը անմիջականորեն կապվում է երիտթուրքական Թուրքիայի դաշնակից Գերմանիայի ռազմական ու պետական գործիչների գրագրությունների, Թուրքիայում հայերի ցեղասպանության նկատմամբ վերաբերմունքի ու նրանց անձնական գնահատումների հետ: Նորահայտ փաստաթղթերը ավելի են ընդլայնում այս հարցում ժամանակի Գերմանիայի հանցավոր կեցվածքի ու մեղսակցության վերաբերյալ իմացության շրջանակները: Արխիվային այս նյութերի ժողովածուն Վ. Միքայելյանը հրատարակեց 1995 թ.՝ «Հայկական հարցը և հայերի ցեղասպանությունը Թուրքիայում (1913-1919 թթ.)» վերնագրով: Ցեղասպանության թեմայով ակադեմիկոսը հրատարակել է նաև բազմաթիվ այլ գիտական ու հրապարակախոսական հոդվածներ, տարաբնույթ հրապարակումներ: Հատկապես պետք է առանձնացնել պատմության թուրք նենգափոխների դեմ նրա հրապարակումները, որպիսիք որքան կրքոտ, այնքան էլ ճանաչողական, ուսանելի բովանդակություն ունեն:

Իր գիտական գործունեության հետ միասին և համընթաց՝ Վ. Միքայելյանը տասնամյակներ ի վեր կատարում է դասախոսական աշխատանք՝ հայոց պատմության իր հարուստ իմացությունը տրամադրելով Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի ուսանողությանը: Այս աշխատանքն ընդգրկում է նաև գիտական կադրերի պատրաստումը. նրա ղեկավարությամբ գիտության շեմն են անցել մեկ տասնյակից ավելի գիտաշխատողներ՝ պաշտպանելով թեկնածուական ատենախոսություն: Գիտության դոկտորների շարքում քիչ չեն նրա երբեմնի սաները:

Հայագիտության մեջ տասնամյակների իր վաստակը Վ. Միքայելյանը այսօր ևս շարունակում է հարստացնել գիտնականի իր առօրյայով, նոր մտահղացումներով, որոնք ի հայտ կգան, ինչպես միշտ, հոդվածի, մենագրության կամ այլ աշխատության տեսքով: Բայց այս ամենից բարձր և դրանցից վեր կանգնած է Վ. Միքայելյան մարդը, անհատը, որը կյանքին ու մարդկանց նայում է իր զարմանալի անմիջականությամբ և շիտակ հայացքով:

Ակադեմիկոս Վ. Միքայելյանի վաստակը նրա ստեղծած գիտության կենսունակության մեջ է, որ արդյունավորվելու է դեռ շատ մնայուն արժեքներով: Մաղթենք նրան քաջառողջություն, երկար տարիների կյանք և մեզ՝ նրա գործընկերներին, իր հետ միասին աշխատելու բավականություն:

«ԼՐԱԲԵՐ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ»
հանդեսի խմբագրություն